

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

22.05.2018 18:37



2018 թվականի մայիսի 22-ին ՀՀ փաստաբանական դպրոցի 61 շրջանավարտ ստացել է փաստաբանի գործունեության արտոնագիր: Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը, ողջույնի խոսքում նշել է. «Այսօր երկրի իշխանությունների կողմից իրապարակային հայտարարությունների տեսքով մենք ստանում ենք այն հավաստիացումները, որ արդարադատության իրականացման համար վերանալու են խոչընդոտները: Այս նոր իրավիճակում փաստաբանի դերն առավել քան երբևէ կարևոր և առանցքային է լինելու»: Նա շեշտել է, որ արտոնագրի հավակնորդներից յուրաքանչյուրն իր ուժերով է ընդունվել, սովորել փաստաբանական դպրոցում և ստացել որակավորման վկայական, ինչը կարևոր է հետագա գործունեության ընթացքում կոռուպցիոն ռիսկերը բացառելու հարցում: Փաստաբանների պալատի նախագահը բարի երթ է մաղթել ապագա փաստաբաններին՝ հիշեցնելով նրանց մասնագիտական գործունեությանը սրտացավորեն մոտենալու մասին:

Արա Ջոհրաբյանը շնորհակալություն է հայտնել Փաստաբանական դպրոցի տնօրինությանը, և աշխատակազմին, Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներին, Փաստաբանների պալատի աշխատակազմին, որոնց ջանքերով կազմակարպվել և անց են կացվել ուսումնառությունը և որակավորման քննությունները:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը շնորհավորել է շրջանավարտներին՝ ընդգծելով փաստաբանի դերի կարևորությունն օրենսդրական փոփոխությունների շրջանակներում: Նա հորդորել է շրջանավարտներին պատվով իրականացնել իրենց առաքելությունը. այն է՝ լինել արդարադատության իրականացման առանցքային դերակատար: Նա վստահություն է հայտնել, որ ապագա փաստաբաններն ունենալու են իրենց ավանդը փաստաբանության զարգացման գործում: Ջուզահեռներ անցկացնելով ԱՊՀ երկրների փաստաբանական ինստիտուտների հետ՝ Սիմոն Բաբայանը նշել է, որ մեր հանրապետության փաստաբանական համակարգն առաջատար դիրքերում է շնորհիվ նաև երիտասարդ և ստեղծագործ մտածողություն կրող փաստաբանների:

Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը շնորհավորել է շրջանավարտներին՝ հիշեցնելով, որ ուսումնառության ընթացքում սովորած և քննարկած թեմաների արժեքը նկատվելու է աշխատանքի ընթացքում: Նա խորհուրդ է տվել մասնագիտությանը վերաբերել պատասխանատվությամբ և լինել պրոֆեսիոնալներ: Մաղթել է ապագա փաստաբաններին հիմնել գրասենյակներ և մատուցել արժանավայել ծառայություն: Սեդրակ Ասատրյանն իր ելույթն ավարտել է Կոնֆուցիոսի խոսքերով. «Հիշեք, որ հազարավոր կիլոմետրերը սկսվում են առաջին քայլից»: Եզրափակելով խոսքը՝ Սեդրակ Ասատրյանը ապագա գործընկերներին հորդորել է քայլ անել:

Խորհրդի անդամ Տարոն Սիմոնյանը նշել է, որ փաստաբանն անարդարության դեմ պայքարի մարտիկ է: Նա խորհուրդ է տվել չհիասթափվել և չհանձնվել, հաղթահարել վախերը: Նա նշել է, որ փաստաբանը պետք է կարողանա իրավունքը բարձրացնել արվեստի մակարդակի: «Այն օրը, երբ գիտակցենք, որ ոչ թե մարդն է պայքարի մեջ, այլ պայքարը մարդու մեջ, կլինի արդարությունը հաղթահանդես»,- համոզմունք է հայտնել Տարոն Սիմոնյանը: Նա մաղթել է սիրել գործը և կերտել արդարության պայքարի սեփական պատմությունը:

Խորհրդի անդամ Արա Ղազարյանը նշել է, որ այն ինչ հիմա է կատարվում մեր երկրում մեծ հորիզոններ է բացում ապագա փաստաբանների համար: Նա շեշտել է մարդու իրավունքի նորմատիվ բնույթի հանդեպ հարգանքը: Արա Ղազարյանը նկատել է, որ փաստաբանի աշխատանքում ամենահետաքրքիրներից մեկն այն է, որ բոլորը կարող են լինել նրա վստահորդները: «Փորձը ցույց է տալիս,

որ երեկվա ընդդիմախոսը դառնում է փաստաբանի վաղվա վստահորդը»,-ասել է նա: Արա Ղազարյանը ուշադրություն է հրավիրել մրցակցային պայմանների պարագայում միշտ հիշել փաստաբանական էթիկայի մասին և չվիրավորել հակառակորդ կողմը ներկայցնող գործընկերոջը: Նա հիշեցրել է, որ միշտ էլ հնարավոր է առանց վիրավորելու սուր քննադատել:

Ելույթներով հանդես են եկել նաև Փաստաբանական դպրոցի շրջանավարտներ Դիանա Քարազյանը, Վարազդատ Հարությունյանը և Վահագն Ավագյանը: Նրանք շնորհակալություն են հայտնել Փաստաբանական դպրոցի դասախոսական կազմին և աշխատակազմին ուսունառության գործընթացի պատշաճ կազմակերպման համար: Ապագա փաստաբանները նշել են, որ ամենօրյա աշխատանքով արդարացնելու են փաստաբանի պատվաբեր կոչումը: Վարազդատ Հարությունյանը համարել է փաստաբանական դպրոցը հետբուհական կրթության լավագույն օրինակներից և կարևորել փաստաբանության դերը քաղաքացիական հասարակության կայացման գործում: Վահագն Ավագյանը նշել է, որ յուրաքանչյուր փաստաբանի հաջողություն համայնքի հաջողությունն է: Նա կարծիք է հայտնել, որ մարդն ամենաբանկ կապիտալն է և վճիռները պետք է կայացվեն հանուն Հայաստանի Հանրապետության ժողովրդի:

Ելույթներին հաջորդել են փաստաբանների հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման արարողությունները:













```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```